



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ՝

ՀՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ

ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«18» 03 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000025

Ձեռնարկողը՝

«Աշխարհական Օու» ՍՊԸ

Արագածոտնի մարզ, Աղձք համայնք

Գործունեությունը՝

**Աղձք համայնքի 29-րդ փողոց N2 շենք հասցեում հրկիզարանի
տեղադրման շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվեկվություն**

Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Դունյան



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԵԱԿԱՆ ԵՀՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՃՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՀԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆԵՐՆԵՐՅԱՆ

Թիվ ԲՓ 000025

<< 18 >> 03 2020 p.

**Արագածոպնի մարզի Աղձք համայնքի 29-րդ փողոց N2 շենք
հասցեում հրկիզարանի տեղադրման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն**

Ներածական մաս

«Աշտարակ ՃՈՒ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ գնահատման հաշվետվություն
Ակատեգորիա

Տեղադրման վայրը՝ Արագածոտնի մարզ, Աղջք համայնք

«Աշտարակ ՃՈՒ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թռչունների մարմինների այրման հրկիզարանի տեղադրումը նախատեսվում է իրականացնել Արագածոտնի մարզի Աղջք համայնքի 29-րդ փողոց N2 շենք հասցեում՝ ընկերության սեփականություն հանդիսացող 5հա արտադրական տարածքում: Հողատեսքի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերթօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

Գործունեության նպատակն է վերազինել ընկերության գործունեությունը՝ կենդանական ծագման թափոնների այրման հրկիզարանի տեղադրմամբ, ելնելով բիզնես նկատառումներից և սեփական կարիքների բավարարման անհրաժեշտությունից:

Նկարագրական մաս.

«Աշտարակ ծու» ՍՊԸ-ն զբաղվում է հավի ծվի արտադրությամբ: Այժմ ընկերությունն ունի տարեկան 95000 ճտի և 270000 ածան հավի թռչնատեղ: Գործունեության իրականացման տարածքում առկա են թռչնանցներ (10հատ), ճտանցներ (8 հատ), գրասենյակներ, ծվի, կերի պահեստներ և այլ շինություններ:

Համաձայն գնահատման հաշվետվության ընկերության արտադրական տարածքը սահմանակից է Աղջք և Ուկեհատ համայնքերին: Արտադրական տարածքից մոտակա ընակելի տունը գտնվում է 332մ, իսկ Ուկեհատ համայնքից՝ 330մ հեռավորության վրա:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է գոյություն ունեցող երկարամյա մարդածին ազդեցության ենթարկված տարածքում, որով պայմանավորված է բաց հողատարածքների, ջրային ավազանների, բուսատեսակների և մանրանարսակների



բացակայությունը: Նախատեսվող գործունեության հարակից տարածքում չկան պատմամշակութային հոլովածաններ:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ թոշունների մարմինների այրման և վնասազերծման նպատակով, ընկերության տարածքում տեղադրվելու է ԵՄ ստանդարտին և պահանջներին համապատասխան 907կգ քաշով, 0,659 մ³ տարողությամբ Burn-Mizer 8430 մակնիշի հրկիզարան: Այն տեղադրվելու է ծածկի տակ 4,0x3,0 առանցքային չափերով, ցանկապատված տարածքում՝ բետոնապատ հարթակի վրա: Վառարանի 1 լիցքավորման միջին քանակը կազմելու է 200կգ, տարեկան առավելագույն արտադրողականությունը՝ 20տ/տարի: Այրման ընթացքում վառարանում առավելագույն ջերմաստիճանը հասնելու է 760°C-870°C, որը հնարավորություն է տալու թափոնները ենթարկել խորը ջերմային վնասազերծման: Թափոնների ջերմային վնասազերծումը կատարվելու է հրկիզարանի հիմնական և երկրորդային խցերում: Հրկիզարանի տարեկան առավելագույն աշխատաժամերը կազմելու են 444 ժամ, ապահովելով ժամում 45կգ թափոնի վնասազերծում: Վառարանը կահավորված է 0.17մ տրամագծով և 3մ բարձրությամբ ծխատարով: Տանիքն ունենալու է արտաքին ջրահեռացում: Այն աշխատելու է դիգելային վառելիքով, որի պահեստավորման համար հրկիզարանի անմիջական հարևանությամբ տեղադրվելու է 0,5 տոննա տարողությամբ բաք: Հրկիզարանի վառելիքով մեկ լիցքավորման միջին ծախսը կազմելու է 1,664տ/տարի:

Թոշունների մարմինները պահեստավորվելու են հատուկ 4x6մ չափերի, անջրթափանց պատեր և առաստաղ ունեցող սառնարային պահեստում, որտեղից թափոնները անմիջապես տրվելու են հրկիզարան: Պահեստը լինելու է թերմոսային տիպի՝ կահավորված հատուկ հովացման, ինչպես նաև ջրի և ջրահեռացման համակարգերով: Թափոնները պահեստում պահվելու են ամռանը մինչև 48 ժամ, ձմռանը՝ 72 ժամ տևողությամբ:

Գործունեության իրականացման ընթացքում հողաշինական աշխատանքներ չեն կատարվելու, բնառեսուրսներ (հողային և ջրային) չեն օգտագործվելու: Հրկիզարանի տեղադրման ընթացքում օգտագործվելու է միայն բետոնային խառնուրդ, որը մատակարարվելու է պատրաստի վիճակում: Աշխատողների խմելու և կենցաղային կարիքները բավարարվելու են ընկերության գոյություն ունեցող խմելու ջրի և սանիտարիկանիկ ցանցի միջոցով:

Համաձայն հաշվետվության գործունեության իրականացման ընթացքում՝ երկաստիճան այրման արդյունքում, առաջանալու է այրման մնացորդներ՝ մոխիր, որի առավելագույն քանակը կազմելու է 1 տ/տարի՝ ընդհանուր թափոնի 2-5%-ը: Համաձայն հաշվետվության բարձր ջերմաստիճանի այրման արդյունքում առաջացած թափոնը՝ << բնապահպանության նախարարի 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության /այդ թվում՝ ընդերջօգտագործման/ և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N342-Ն հրամանի համապատասխան հավելվածում ներկայացված է «Կրակային վնասազերծման վառարանների խարամ և մոխիր» տողում՝ 3130080101014 ծածկագրով: Մոխիրը վառարանից հեռացվելու է մեխանիկական և չոր եղանակով, ծեռքով՝ խոզանակի օգնությամբ: Այն լցվելու է բազմակի օգտագործման 2 մետաղական արկերի մեջ՝ ժամանակավոր պահեստավորման նպատակով: Յուրաքանչյուր մետաղական արկի պարունակությունը կազմելու է 100կգ: Մոխիրն արկերով սանիտարական ծառայության մեջնաներով՝ պայմանագրային հիմունքներով տեղափոխվելու է աղբավայրում:

Գնահատման հաշվետվությունում դիտարկել են գործունեության իրականացման գրոյական, այլնոտրանքային (քիմիական, ջերմային) տարրերամեջի վերլուծությունները՝ համապատասխան հիմնավորումներով: Ընկերության կողմից կատարված այլնոտրանքների վերլուծության, շրջակա միջավայրի վրա հնարավոր դրամական բացասական



ազդեցությունների գնահատումների հիման վրա, ընտրվել է թափոնների չեղոքացում՝ ժամանակակից հրկիզարանների միջոցով: Հաշվարկվել է նաև շրջակա միջավայրի վրա (մթնոլորտ) ազդեցության տնտեսական վնասի գնահատումը, որը կազմելու է 4147 դրամ/տարի:

Ըստ հաշվետվության շրջակա միջավայրի վրա լրացուցիչ ազդեցությունների ավելացում չի լինելու, գործունեության իրականացումը չի ունենալու համալիր ազդեցություններ, քանի որ տարածքում բացակայում են արտանետումներ ունեցող այլ արտադրություններ:

Համաձայն գնահատման հաշվետվության վառարանի շահագործման ընթացքում, թափոնների և դիգելային վառելիքի այրման արդյունքում առաջանալու են վնասակար նյութերի արտանետումներ, հիմնականում 5 նյութերի տեսքով՝ ածխածնի օքսիդի(CO), ազոտի օքսիդի(երկօքսիդ՝ NO₂), ծծմբի երկօքսիդի (SO₂), պինդ մասնիկների(ՊՄ)գ/վրկ, սահմանային ածխաջրածիններ'(CH): Արտանետումների ազդեցությունը հաշվարկվել է «Ռադուգա» համակարգչային ծրագրով, որի համաձայն գործունեության իրականացման արդյունքում առավելագույն գետնամերձ կոնցենտրացիաները (ֆոնի հետ հաշվարկված՝ մգ/մ³-ով) լինելու են բնակելի գոտիների թույլատրելի նորմերի սահմաններում՝ ազոտի երկօքսիդ՝ 0.696, ածխածնի մոնօքսիդ՝ 0.0935, սահմանային ածխաջրածիններ՝ 0.0362, ծծմբի երկօքսիդ՝ 0.132, պինդ մասնիկներ(մոլր)՝ 0.408, ազոտի և ծծմբի երկօքսիդներ, ազոտի երկօքսիդի հաշվարկվ՝ 0.748, ըստ ՄԹԿ-ի մասի:

Նախատեսվող գործունեության ազդեցությունները հիմնականում կապված են լինելու թափոնների այրման, տեղափոխման, օդում՝ ածխածնի, ազոտի և ծծմբի երկօքսիդների, պինդ մասնիկների, ածխաջրածինների պարունակության ավելացման, արտակարգ իրավիճակների ռիսկերի առաջացման հետ, որոնք շրջակա միջավայրի վրա կունենան ազդեցություններ՝ թույլատրելի նորմերի սահմաններում: Համաձայն գնահատման հաշվետվության նախատեսվում է օդային ավազանի աղտոտումից պահպանման, թափոնների կառավարման, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ և մոնիթորինգ (մշտադիտարկում):

- այրման խցում անհրաժեշտ ջերմաստիճանի և համապատասխան աշխատանքային ռեժիմի ապահովում,
- վառարանի ծխատար խողովակի մերձակայքում՝ 2-5մ շառավղով նմուշառում,
- մասնագիտացված լաբորատորիայի կամ կազմակերպության կողմից, օդում ածխածնի, ազոտի և ծծմբի երկօքսիդների, պինդ մասնիկների, ածխաջրածինների արտանետումների քանակի ստուգում և լաբորատոր անալիզի կատարում՝ ամիսը 1 անգամ,
- վառարանի մաքրում՝ չոր եղանակով, առանց ջրի և լուծույթների օգտագործման,
- թափոնների պահեստավորում հատուկ և փակ տարածքում՝ պարկերի կամ բեռնարկերի մեջ, անձևաջրերի հետ դրանց շփումը բացառելու համար,
- վառելիքի մետաղական պահոցների մաքրում՝ 2 տարվա պարբերականությամբ,
- արտակարգ և վթարային իրավիճակների առաջացման դեպքում՝ գործունեության դադարեցում և այլն:

Բնապահպանական միջոցառումների կատարման համար նախատեսվող ծախսերը կազմելու է տարեկան 2.4 մլն դրամ:

Պատճառաբանական մաս. Նախատեսվող գործունեությունը կատարվելու է գոյություն ունեցող արտադրական՝ հողային, ջրային ռեսուրսներից և բուսականությունից զուրկ արտադրական տարածքում: Նախատեսվող գործունեության ազդեցությունը օդային ավազանի վրա, որը գտնվելու է թույլատրելի նորմերի սահմաններում: Տաշտունների մարմինների բարձր ջերմաստիճանում վնասազերծման արդյունքում առաջանալու վայրման մնացորդներ՝ մոխիր, որի համար ընկերությունը ստացել է շրջակա միջավայրի նախարարության հետ համաձայնեցված N 328-17 թափոնի անձնագիր:



Հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են համապատասխան մասնագիտական կառուցները՝ առողջապահության, արտակարգ իրավիճակների նախարարությունները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները։ Փորձաքննական գործընթացում գնահատման հաշվետվությունն առաջարկություններով և դիտողություններով լրամշակվել է։ Օրենսդրությամբ սահմանված կարգով Արագածոտնի մարզի Աղձք համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել։

Փորձաքննական պահանջներ

- Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել մշտադիտարկման (մոնիթորինգ) և հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարումը, իսկ դրանց չքավարաբան դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ, բացառելով մթնոլորտային արտանետումների շեղումները նորմերից:
 - Պահպանել հրկիզարանի այրման ջերմաստիճանը՝ ապահովելով ՇՄԱԳ հաշվետվությամբ ամրագրված թափոնի(մոխիր) բաղադրությունը:
 - Պահպանել աշխատանքի անվտանգության նորմերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Աշտարակ ՃՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Աղջք համայնքի 29-րդ փողոց N2 շենք հասցեում հրկիզարանի տեղադրման նախագծի շրջակա միջավայրի վրա ազրեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլուխող մասնավոր



Թ. Նուրիջանյան